ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԱԼԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Պատմության մեթոդաբանությանը հետաքրքրող կարևոր հարցերից մեկն այն է, թե որն է հասարակական պատմության առարկայական ոլորտը, որոնք են դրա գործառույթները և հիմնական մեթոդները: Հասարակական պատմության առարկայական ոլորտը բնութագրելիս թվում է, թե դրանում ոչ մի դժվարություն չկա. դա անցյալն է իր դրսևորումների ողջ որոշակիությամբ, անհատականությամբ ու բազմազանությամբ[1]: Սակայն այսպիսի սահմանումը կարող է ներառել ոչ միայն հասարակության ու մարդու, այլև մեզ հայտնի այլ բնագավառների՝ տիեզերքի, երկրի, բուսական, կենդանական աշխարհների և այլ ոլորտների պատմությունները:

Ներկայումս թերևս չի կարելի խոսել պատմության ընդհանուր ուսմունքի գոյության մասին: Դեռ պետք է ուսումնասիրվեն առանձին բնագավառների պատմությունները, դրանց կառուցվածքային-մեթոդաբանական առանձնահատկությունները և համադրության միջոցով բացահայտվեն ընդհանրություններն ու տարբերությունները: Եվ այդ առանձնացված ընդհանրությունները պետք է դառնան պատմություն՝ որպես ընդհանուր գիտության յուրահատկություններ: Առայժմ դա չունենք, և հիմնականում ընդունված է պատմություն ասելով հասկանալ անցյալի հասարակության, մարդու, նրա անհատականության, սոցիալական, քաղաքական, իրավական, տնտեսական, հոգևոր, հոգեբանական, մշակութային հարթությունների, տարածության-ժամանակի մեջ դրանց փոփոխման, կարելի է պնդել՝ օրինաչափ փոփոխման առանձնահատկությունների բացահայտումը, նկարագրությունն ու բացատրությունը:

Խորհրդային շրջանում պատմության օրինաչափություն ասելով հիմնականում հասկացվել է պատմական մատերիալիզմի ուսմունքում տեղ գտած ֆորմացիաների փոփոխման օրինաչափությունը: Դրա համաձայն՝ մարքսիստ պատմաբաններն ու փիլիսոփաները գտնում էին, որ բոլոր պատմական փաստերը պետք է համաձայնվեն այդ օրինաչափությանը: Հարց է ծագում՝ ունե՞ն արդյոք փիլիսոփայական գիտելիքները նման կարգավիճակ: Չէ՞ որ դրանք «սահմանային» գիտելիքներ են, որոնք ունեն կարգավորող, համակարգող, ուղղորդող դեր: Եթե

[1] Տե՛ս «Советская историческая энциклопедия», т. 6, М., 1965, էջ 577-578:

պատմական վարկածներն անմիջականորեն հենվում են պատմական փաստերի վրա, ապա փիլիսոփայական գիտելիքները փաստերից կտրվելու և «ճախրելու» հատկություն ունեն, որոնք երբեմն կարող են հանգեցնել բացարձակությունների և միակողմանիությունների:

Ահա, մեր կարծիքով, ֆորմացիաների մարքսիստական ուսմունքն այդպիսի վարկած է, որի նշանակությունը պատմական գիտության համար այն է, որ պատմական ուսումնասիրություններ կատարելիս պետք է հաշվի նստել հասարակության տարածաժամանակային, քաղաքական, իրավական, տնտեսական, մշակութային, հոգևոր, հոգեբանական ամբողջությունների, նրանց փոփոխման դինամիկայի, զարգացման հետ: Իսկ պատմական գիտության տեսական ըմբռնումները, դրա օրինաչափությունները պետք է բացահայտվեն իրենց՝ պատմաբանների կողմից՝ պատմական գիտության առանձնահատկություններից ելնելով: Ճիշտ է՝ սոցիոլոգիան, քաղաքագիտությունը, հոգեբանությունը, փիլիսոփայությունը և այլ գիտություններ ևս ուսումնասիրում են մարդուն և հասարակությունը, բայց տարբեր տեսանկյուններից, տարբեր մեթոդներով: Սակայն պատմական գիտությունն ունի իր ինքնավարությունը և այդ իմաստով հարստացնում, լրացնում է սոցիալ-հումանիտար այլ գիտությունների հետազոտությունների արդյունքները: Հարց է առաջանում՝ որո՞նք են պատմական գիտության գործառույթները[2]:

Պատմական գիտության գործառույթները

Պատմական գիտության գործառույթները պայմանավորված են ժամանակակից իրականության վրա պատմական փորձի, պատմական գիտելիքների ազդեցությամբ: Հենց դրանց համախմբությամբ էլ որոշվում է պատմական գիտության արժեքը, այն, թե ինչքանով են դրա միջոցով լուծվում հասարակության առջև ծառացած հիմնախնդիրները, որքան է դրա սոցիալական պահանջվածությունը: Իհարկե, մարդկանց կողմից իրենց անցյալով հետաքրքրվելն ամբողջապես պայմանավորված չէ միայն դրա հասարակական ազդակներով: Պատմության նկատմամբ հետաքրքրությունը կարող է պայմանավորված լինել նաև զուտ գիտականության պահանջով, անցյալի իրողությունները վեր հանելու, դրանք ճանաչելու ձգտմամբ, այսինքն՝ ճշմարտության բացահայտման մղումով: Անցյալի փորձը ուսումնասիրելը մեզ օգնում է իմաստավորելու ներկան և կանխատեսելու ապագան: Պատմական գիտելիքներն ավելի ակտիվ են թափանցում հասարակական կյանքի մեջ: Ընդլայնվում են դրանց գործունեության ոլորտները, հետազոտության

---

[2] Տե՛ս **Болингброк.** Письма об изучении и пользе истории. М., 1978, **Блок М.** Апология истории, или Ремесло историка. М., 1979, **Коллингвуд Р. Дж.** Идея истории. Автобиография. М., 1980, **Ракитов А. И.** Историческое познание., М., 1982, **Рикер П.** История и истина. СПб., 2002, **Румянцева М. Ф.** Теория истории. М., 2002:

օբյեկտները, դիֆերենցացումը: Իսկ դա հանգեցնում է պատմական գիտության գործառույթների ընդլայնմանը:

Հնարավոր չէ չնկատել, որ միևնույն գործառույթը տարբեր տարածաժամանակային պայմաններում կարող է ունենալ միանգամայն հակառակ դեր: Օրինակ, պատմության դաստիարակչական գործառույթը նացիզմի ժամանակաշրջանում օգտագործվել է սեփական նպատակների համար: Դրանից անշուշտ չի հետևում, որ պատմությունը պետքական չէ: Պարզապես դրա գործառույթները պետք է դիտարկել միասնականության մեջ՝ առաջնային համարելով գիտականությունը:

Պատմության գիտաճանաչողական գործառույթը

Հասարակությունն ինքնագիտակցության կարող է հասնել բոլոր հասարակական-հումանիտար գիտությունների շնորհիվ: Այդ համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի պատմությունը: Անհնար է լիարժեք ճանաչել ներկան, դրա տարածաժամանակային բնութագրերը, էական կողմերը, զարգացման միտումները առանց դրանց պատմական հիմքերը բացահայտելու: Հասարակական զարգացման ցանկացած օրինաչափություն կարող է ճանաչվել պատմության լույսի ներքո, պատմական դիտարկման միջոցով:

Այժմ պատմականությունը բնութագրական է բոլոր գիտությունների համար: Միայն դրա միջոցով և անցյալի փորձի անկողմնակալ, համակողմանի ուսումնասիրությամբ կարելի է բացահայտել գիտական գիտելիքների, այդ թվում՝ հասարակական-հումանիտար գիտությունների զարգացման օրինաչափությունները:

Պատմության կանխատեսման գործառույթը

Հասարակության զարգացման օրինաչափությունների պարզաբանումը դրա կանխատեսման անհրաժեշտ հիմքն է: Անտիկ ժամանակներից մարդիկ ձգտել են անցյալի պատմական գիտելիքներն օգտագործել ապագան կանխատեսելու համար: Սակայն այդ կանխատեսումները հիմնականում եղել են ուտոպիական:

Որոշ փիլիսոփաներ կարծում են, որ գիտելիքի կանխատեսման ունակությունը հատուկ է միայն բնագիտական գիտելիքներին: Մենք համամիտ ենք այն մտածողների հետ, որոնք համոզված են, որ ինչպես բնագիտությանը, այդպես էլ հասարակական-հումանիտար գիտելիքներին, այդ թվում նաև պատմական գիտելիքներին, բնորոշ է կանխատեսման ունակությունը: Պարզապես պատմական գիտելիքներին առնչվող գործոններն ավելի շատ են ու ավելի բարդ, ուստի մենք գործ ունենք կանխատեսման միտումների հետ:

Որպեսզի պատմական գիտելիքների կանխատեսումները նկատելի լինեն, դրանք պետք է շարադրվեն ոչ միայն նկարագրական եղանակով, «հյութեղ», այլև պետք է ուղեկցվեն ընդհանրություններով, բա-

ցատրություններով, օրինաչափությունների արտածմամբ, այսինքն՝ լինեն ամբողջական, համակարգված, կառուցվածքային:

Պատմության հասարակական հիշողություն լինելու գործառույթը

Պատմության էջերում ամրագրված անցյալի փորձն ունի նաև ինքնուրույն նշանակություն: Այն, վերստեղծելով մարդկային հասարակության անցյալի պատկերը, կատարում է սոցիալական հիշողության գործառույթ: Այդ իմաստով պատմությունը մարդկային հասարակության գոյության և հետևողական զարգացման անհրաժեշտ նախադրյալ է: Ոչ մի սերունդ չի սկսում զրոյից: Յուրաքանչյուրը պատմական ասպարեզ է դուրս գալիս՝ այս կամ այն չափով յուրացնելով անցյալի փորձը, և իր հասարակական գործունեությունը կատարելիս հենվում է դրա վրա: Պատմական գիտությունը միջնորդավորված դիրք է գրավում անցյալի և ներկայի միջև:

Պատմական գիտելիքները հոգևոր մշակույթի անհրաժեշտ տարրեր են: Նրանք ստեղծում են այն ելակետերը, առանց որոնց անհնար է հասարակության հետագա առաջընթացը: Կյանք մտնող յուրաքանչյուր սերնդի պատմությունը տալիս է ոչ միայն անցյալի մասին գիտելիքներ, այլև, ինչպես և փիլիսոփայությունը, արժեքներ՝ ներկայում կողմնորոշվելու համար: Պատմականությունը մարդկային հասարակությանը հաղորդում է անհրաժեշտ կայունություն, ինքնավստահություն:

Շատ դեպքերում «պատմություն» գիտությունը համեմատում են մարդու ունեցած անհատական հիշողության դերի հետ: Հիշողությունը կորցրած մարդը, նույնիսկ եթե մնացած ամեն ինչով առողջ է, կորցնում է մարդկային հատկանիշները, քանի որ նա դադարում է իրեն անհատականություն զգալ, կորցնում է իր «ես»-ը: Պատմական հիշողության կորուստն ինքնասպանություն է մարդու և մարդկության համար: Մարդկային հասարակությունը կարող է ինքնագիտակցել՝ միայն ունենալով անցյալի մասին սիստեմատիկ հիշողություն: Ուսումնասիրելով անցյալը՝ մենք ճանաչում ենք ինքներս մեզ:

Հավաքելով, պահպանելով, տարածելով անցյալի մասին կոլեկտիվ հիշողությունները՝ պատմական գիտելիքները շատ դեպքերում ձևավորում են հասարակության հոգևոր մթնոլորտը, պատմական գիտակցությունը, ինչը օգնում է որոշելու մեր տեղը ժամանակի անսահման հոսքում: Պատմական գիտակցության վիճակից է կախված հասարակության կայունությունը, կրիտիկական վիճակները հաղթահարելու նրա կարողությունը: Յուրաքանչյուր հասարակություն անցյալին տալիս է սեփական հարցերը և ինքն իրեն կարող է ընկալել սեփական անցյալի լույսի ներքո:

Ճիշտ է՝ ընդունված է ասել, որ անցյալի հիշողությունը չի կարող լինել անկողմնակալ, այդուամենայնիվ յուրաքանչյուր պատմաբանի

պատվի գործն է վեր կանգնել անձնական, հասարակական-քաղաքական նախապատվություններից և հանդես գալ անաչառ քննադատի դիրքերից:

Պատմության դաստիարակչական գործառույթը

Անցյալի փորձը դարձնելով ժամանակակիցներին հասանելի՝ պատմական գիտությունը կարևոր դեր է խաղում նրանց հասարակական դաստիարակության մեջ: Պատմական գիտությանը ներքնապես բնորոշ դաստիարակչական գործառույթը պայմանավորված է իր առարկայով: Անկախ առանձին պատմաբանների սուբյեկտիվ ցանկություններից ու մղումներից՝ նրանց շարադրած անցյալի փաստերը կրում են դաստիարակչական լիցք, հուզականորեն ազդում են ընթերցողների վրա:

Բոլոր ժամանակներում՝ սկսած անտիկ շրջանից, պատմությանը դիմել են գրականության և արվեստի գործիչները: Նրանց լավագույն ստեղծագործությունները ոգեշնչված են պատմության օրինակներով:

Անցյալի փորձը, որն ամրագրված է ժողովրդի հասարակական հիշողության մեջ, ունի բարձրագույն արժեք և համապատասխան պայմաններում կարող է վերածվել իրական քաղաքական ուժի: Պատահական չէ, որ ժողովուրդների կյանքի շրջադարձային փուլերում մեծանում է նրանց հետաքրքրությունը պատմության նկատմամբ:

Ինչպես նկատել է Օ. Բիսմարկը 1866 թվականի ավստրո-պրուսական պատերազմի մասին, այն շահեցին պրուսական զինվորները, սակայն անգնահատելի է պրուսական դասատուների, հատկապես պատմության դասատուների դերը: Մարդկանց պատմությամբ դաստիարակելը պետք է հիմնվի ոչ թե առանձին ժամանակահատվածների, այլ ողջ պատմական փորձի վրա: Առանց անցյալի հիշողության չի կարող լինել ապագայի տեսլական:

Պատմական հիշողությունը բարոյական վերածննդի աղբյուր է դառնում: Պատմական փորձը դաստիարակում, ոգևորում է ժամանակակիցներին, ակտիվ ուժ է դառնում նրանց կյանքում: Օրինակ՝ Վարդանանց պատերազմը հայերի համար, Կուլիկովյան ճակատամարտը ռուսների համար: Պատմական հիշողությունը դաստիարակում է քաղաքացիական որակներ: Հնարավորություն է տալիս կողմնորոշվելու ներկայի բարդ իրադրություններում:

Պատմությունը և ընդհանրապես հումանիտար գիտությունները սերունդներին դաստիարակում են մարդկայնության, բարու, արդարության ոգով: Պատմական փորձը մարդու և հասարակության ինքնագիտակցման ու ինքնաճանաչման միջոց է:

Մարդու և հասարակության պատմության առարկան ու հիմնական գործառույթները ներկայացնելուց հետո առանձնակի հետաքրքրություն է ձեռք բերում պատմական գիտելիքի բնույթի, առանձնահատկություն-

ների պարզաբանման հարցը: Մենք այն կփորձենք բացահայտել՝ հակիրճ ներկայացնելով պատմական գիտելիքներ ձեռք բերելու հիմնական մեթոդները: Մեթոդներ, որոնք շատ պատմաբաններ օգտագործում են իրենց ուսումնասիրություններում:

Պատմական հետազոտությունների հիմնական մեթոդները

Մեթոդ (հուն. methodos) բառը ամենալայն իմաստով նշանակում է «ճանապարհ դեպի որևէ նպատակ»: Այն սուբյեկտի հասարակական գործունեության կարգավորված, կազմակերպված եղանակ է: Ինչպես ընդունված է ասել, ոչ միայն հետազոտության արդյունքը, այլև դեպի այն տանող ճանապարհը (մեթոդը) պետք է լինի ճշմարիտ:

Մեթոդը ճանաչողական գործունեության որոշակի կանոնների, եղանակների, ձևերի, նորմերի համակարգ է, որը սուբյեկտին ուղղորդում է որոշակի արդյունքների հասնելուն, կոնկրետ խնդիրներ լուծելուն: Այն կարգավորում է ճշմարտության փնտրտուքը, թույլ է տալիս տնտեսել ուժերն ու ժամանակը, նպատակին հասնել կարճ ճանապարհով: Ճշմարիտ մեթոդը յուրահատուկ կողմնացույց է, որի օգնությամբ ճանաչող սուբյեկտը հարթում է իր ճանապարհը՝ խուսափելով սխալներից:

Մեթոդի առաջացման սկզբնական շրջանում այն կապված է եղել որոշակի կարգով ու միջոցներով որոշակի, պրակտիկ խնդիրների լուծման հետ: Հետագայում գիտական խնդիրներ և հիմնահարցեր լուծելու համար աստիճանաբար առաջացան տարբեր մեթոդներ:

XVII դ. փորձարարական բնագիտության առաջացման հետ միասին առաջին պլան մղվեց գիտական գիտելիքներ ձեռք բերելու մեթոդների հետազոտությունը:

Այսպես, Ֆ. Բեկոնը մեթոդը համեմատել է լուսամփոփի հետ, որը մթության մեջ լուսավորում է ճանապարհը: Նրա մեկ այլ արտահայտությամբ՝ «Կաղը գնալով ճանապարհով ավելի շուտ տեղ կհասնի, քան ճանապարհից շեղված վազորդը»: Իսկ Ռ. Դեկարտը մեթոդ է անվանել այն «ճշգրիտ և պարզ կանոնները», որոնց պահպանումը թույլ է տալիս տարբերել կեղծը ճշմարիտից[3]:

Կարելի է ասել, որ մեթոդը պարբերական, կազմակերպված, գիտակցված գործողությունների հաջորդափոխություն է նախանշված նպատակին հասնելու համար[4]:

Մարդն իր հասարակական գործունեության, գիտական ճանաչողության ընթացքում օգտվում է տարբեր մեթոդներից: Գիտական, մեթոդաբանական գրականության մեջ հիմնականում ներկայացված են տրամաբանական, բնագիտական մեթոդների առանձնահատկութ-

---

[3] Տե՛ս **Декарт Р.** Избранные производения. М., 1950, էջ 89:

[4] Տե՛ս **Кохановский В. П., Лешкевич Т. Г., Матяш Т. П., Фатхи Т. Б.** Основы философии науки. Ростов-на-Дону, 2004, էջ 307-370:

յունները և առավել քիչ՝ հասարակագիտական, հումանիտար գիտությունների, առանձնապես՝ պատմական գիտությունների մեթոդները: Մեր խնդիրն ենք համարում ոչ միայն ներկայացնել պատմական գիտությունների ընդունված հիմնական մեթոդները, այլև դրա միջոցով ընդհանուր պատկերացում տալ պատմական գիտելիքների բնույթի, առանձնահատկությունների, դրանում ճշմարտության ըմբռնման մասին:

Գրականության մեջ պատմական գիտելիքները ներկայացնելու հիմնական մեթոդների թվում նշվում են պատմագենետիկականը, ռետրոսպեկտիվը, պատմահամեմատականը, պատմատիպաբանականը, պատմահամակարգայինը, տերմինաբանական վերլուծության, մաթեմատիկական մեթոդները: Հակիրճ ներկայացնենք այդ մեթոդները[5]:

Պատմագենետիկական մեթոդ

Պատմագենետիկական մեթոդն ամենատարածվածն է պատմական հետազոտություններում: Դրա էությունը պատմականորեն փոփոխվող, զարգացման գործընթացում հետազոտվող ռեալության հատկությունները բացահայտելն է: Պատմագենետիկական մեթոդն իր տրամաբանական բնույթով վերլուծական-ինդուկտիվ է, իսկ հետազոտվող ռեալության մասին ինֆորմացիայի արտահայտման ձևով նկարագրական է: Դա չի նշանակում, որ դրանում չեն կարող օգտագործվել քանակական, կառուցվածքային ցուցանիշներ:

Պատմաբանը պատմագենետիկական մեթոդով վերլուծում է պատմական զարգացման գործընթացը, բացահայտում է պատճառահետևանքային կապերը, իսկ պատմական դեպքերն ու անձնավորություններին ներկայացնում է իրենց անհատականության տեսանկյունից:

Պատմագենետիկական մեթոդը նկարագրական է, փաստագրական: Այն ծառայում է որոշակի փաստական տվյալների ձեռքբերմանը, հավաքմանը, մշակմանը, համակարգմանը: Թեպետ պատմագենետիկական մեթոդն օգտագործվում է վաղ ժամանակներից, այդուամենայնիվ չունի մշակված հասկացական ապարատ: Դա է պատճառը, որ պատմագենետիկական մեթոդը լավ արդյունքներ է տալիս, երբ համադրվում է համապատմական այլ մեթոդների հետ:

Ռետրոսպեկտիվ մեթոդ

Պատմական ճանաչողությունը ռետրոսպեկտիվ է (լատիներեն retro - հետ և specio - նայել բառերից): Սովորաբար պատմաբանը ուսումնասիրություն նախաձեռնելիս անցում է կատարում հետևանքից պատճառներին: Անցյալի «մնացորդներից» վերակառուցում է իրեն

[5] Տե՛ս **Уваров А. И.** Гносеологический анализ теории в исторической науке. Калинин, 1973, **Ковальченко И. Д.** Методы исторического исследования. М., 2003:

հետաքրքրող պատմական շրջանի կամ անձնավորության ամբողջական պատկերը:

Ռետրոսպեկտիվ մեթոդի էությունն այն է, որ զարգացման ավելի բարձր աստիճանի միջոցով գնահատվում է նախորդ աստիճանը: Յուրաքանչյուր նախորդ փուլ կարելի է հասկանալ ավելի բարձր փուլերի հետ ունեցած կապի միջոցով: Այս գործընթացի հիմքում ընկած է համաշխարհային պատմության միասնականության գաղափարը:

Ռետրոսպեկտիվ մեթոդը կիրառելի է ոչ միայն առանձին երևույթների, այլև ամբողջական դարաշրջանների ուսումնասիրության դեպքում: Ինչպես ասում են՝ մարդու անատոմիան բանալի է կապիկի անատոմիան հասկանալու համար: Ռետրոսպեկտիվ մեթոդի կիրառման դժվարությունն այն է, որ տարբեր ժամանակաշրջանի օբյեկտները, երևույթները, գործընթացները գնահատելիս, համեմատելիս պետք է հաշվի առնվեն նաև ամեն մի ժամանակաշրջանի յուրահատկությունները:

Պատմահամեմատական մեթոդ

Պատմահամեմատական մեթոդը պատմական գիտելիքներ ձեռք բերելու և ներկայացնելու ամենատարածված միջոցներից է[6]:

Կարելի է պնդել, որ առանց համեմատության չի կարող իրականացվել ոչ մի գիտական հետազոտություն: Համեմատության եղանակը պատմական ճանաչողությունում օգտագործվել է դեռևս անտիկ դարաշրջանում, երբ պատմագիրներն առաջնորդվել են պատմության շրջափուլային (ցիկլիկ) փոփոխման հայեցակարգով: Այդ հայեցակարգում համեմատությունը հանդես էր գալիս որպես փակ, կրկնվող շրջափուլերի մասին պատկերացումների ստեղծման միջոցներից մեկը: Դրանում գործնականում կարող էին համեմատվել ցանկացած դեպք, երևույթ, գործընթաց: Պետք է նկատել, որ պատմահամեմատական մեթոդի առաջացման սկզբնական շրջանում բացակայում էր հասարակական երևույթների որակական որոշակիության պատկերացումը:

Նոր ժամանակներում պատմության շրջափուլային փոփոխման ուսմունքը փոխարինվեց Վիկոյի շրջապտույտի տեսությամբ: Այն հիմնված էր առանձին դեպքերի և ամբողջական դարաշրջանների համեմատության վրա: Դրանցում նա վեր է հանել տարբերությունները, թեև հիմնականում՝ ի վնաս անհատականի, փնտրել է նմանը, կրկնվողը, օրինաչափը: Նա զրկել է պատմության շրջապտույտի գաղափարը երևույթների համադրման ռացիոնալորեն հիմնավորված չափանիշից:

Այդ առումով լուսավորական պատմագրության բնորոշ գծերից է այն, որ ունի նման չափանիշ: Դա համաշխարհային պատմության միասնականության վերաբերյալ համոզմունքն է՝ որպես միասնական և

---

[6] Տե՛ս **Мелконян Э. Л.** Проблемы сравнительного метода в историческом знании. Ер., 1981, **Барг М. А.** Категории и методы исторической науки. М., 1984:

անփոփոխ մարդկային բնության արդյունք: Լուսավորիչները պատմահամեմատական մեթոդն օգտագործում էին շատ լայն. համեմատում էին նույնիսկ այն, ինչը սկզբունքորեն համեմատել չէր կարելի: Համեմատության չափանիշը միասնական և անփոփոխ մարդկային բնությունն էր: Այդպիսի ըմբռնումը խանգարում էր երևույթների անընդմեջ փոփոխվող աշխարհում ճանաչելու առանձնահատուկը, յուրօրինակը, մտածողությունն ուղղորդում էր նմանի, ընդհանրականի բացահայտմանը: Ուստի լուսավորական շրջանում պատմահամեմատական մեթոդի կիրառումը հանգեցրել է մակերեսային համեմատությունների և համանմանությունների (անալոգիաների) առաջադրմանը:

Նկատենք, որ պատմահամեմատական մեթոդի էությունը կախված է պատմական իրականության բնույթից: Այն մի կողմից անհատական է, անկրկնելի, մյուս կողմից գործ ունենք նմանի, ընդհանրականի հետ: Չէ՞ որ մարդիկ և հասարակական կյանքն ու միջավայրն ունեն ոչ միայն տարբերություններ, անհատականություն, այլև ընդհանրություններ, նմանություններ: Պատմահամեմատական մեթոդը թույլ է տալիս համադրման, համեմատության միջոցով անհատականի մեջ բացահայտել ընդհանրականն ու նմանը: Համեմատությունն արդյունավետ կլինի այն դեպքում, եթե գործ ունենանք նույն կարգի, նույն հիմքերով, առավել շատ ընդհանրական, էական ներքին հատկանիշներ ունեցող օբյեկտների, երևույթների հետ:

Հասարակական կյանքը ոչ թե դեպքերի պարզ ընթացք է, այլ որակական ամբողջությունների, փուլերի դինամիկ հաջորդափոխություն: Ուստի պատմական ճանաչողության այդ փուլերի առանձնացումը կարևոր խնդիր է: Այդպիսի ամբողջությունների, փուլերի բացահայտումը ևս իրականացվում է համեմատության միջոցով, սակայն որոշ մտածողներ գտնում են, որ դա գիտական ճանաչողության, վերլուծության առանձնահատուկ մեթոդ է: Այն անվանում են տիպաբանացման մեթոդ: Դրա խնդիրն է օբյեկտներին, երևույթներին, գործընթացներին բնորոշ էական հատկանիշների միջոցով կարգավորել, խմբավորել դրանք որպես որակապես որոշակի տիպեր, դասեր, խմբեր:

Պատմահամակարգային մեթոդ[7]

Այս մեթոդի միջոցով պատմական ռեալությունը դիտարկվում է իր ամբողջականության և գործառման ներքին մեխանիզմների տեսանկյունից: Պատմական համապատասխան համակարգի առանձնացումից հետո պետք է բացահայտել դրա բաղադրամասերի և դրանց հատկությունների փոխկապակցվածության բնույթը:

Պատմահամակարգային մեթոդը կիրառելիս չպետք է մոռանալ նաև տվյալ ժամանակաշրջանի «մարդու և հասարակության պատ-

[7] Տե՛ս **Ракитов А. И.** Историческое познание. М., 1982, էջ 64-92:

մության ընդհանուր պատկերի» դերի մասին: Այն «աշխարհի գիտական պատկերի» բաղկացուցիչ մասն է[8]:

Մարդու և հասարակության պատմության ընդհանուր պատկերը ներառում է տվյալ ժամանակաշրջանի մարդու, հասարակության մասին գոյություն ունեցող ընդհանուր պատկերացումները, պատմական գիտելիքներ ձեռք բերելու և հիմնավորելու միջոցները, արժեքները, նորմերը, ստանդարտները, ավանդույթները, իդեալները, մտածողության ոճը, «հարացույցը», «հետազոտական ծրագրերը», որոնք ուղղորդում են պատմության բնագավառի հիմնահարցերի առաջադրումն ու դրանց լուծման միջոցների ընտրությունը, ինչպես նաև՝ տարածության ու ժամանակի ընդհանրական պատկերացումները: «Մարդու և հասարակության պատմության ընդհանուր պատկերը» գիտական աբստրակցիա է՝ արտահայտված մետաֆորիկ ձևով: Դրա միջոցով համակարգվում, ամբողջանում, կանոնակարգվում, հիմնավորվում են պատմական այն գիտելիքները, որոնք անմիջականորեն չեն հենվում էմպիրիկ փաստերի վրա:

Տերմինաբանական վերլուծության մեթոդ

Հայտնի է, որ պատմաբանը պատմական ճանաչողության հիմնական մասը ձեռք է բերում գրավոր աղբյուրներից: Ուստի պատմական ռեալությունը ճշգրիտ ներկայացնելու համար կարևոր նշանակություն է ստանում պատմական աղբյուրներում տերմինների ճշգրիտ նշանակությունը հասկանալու հարցը: Բարդությունն այն է, որ հասարակական հարաբերությունների փոփոխման հետ փոխվում են նաև լեզվական որոշ իմաստներ: Եվ որքան ավելի հեռու է ուսումնասիրվող ժամանակաշրջանը, այնքան ավելի է բարդանում լեզվական իմաստների ճշգրիտ հասկացումը: Բացի այդ, երբեմն պատմական տերմինները կարող են օգտագործվել տարբեր նշանակություններով: Այդ պատճառով պատմաբաններն առանձնակի նշանակություն են տալիս տերմինների վերլուծությանը: Տերմինաբանական վերլուծությունն առանձնահատուկ նշանակություն ունի անտիկ և միջնադարյան ժամանակաշրջանների կատեգորիաները հասկանալու համար: Որոշ պատմաբաններ, օրինակ՝գերմանացի Բ. Գ. Նիբուրը և Տ. Մոմզենը, օգտվելով դասական բանասիրության և համեմատական լեզվաբանության նվաճումներից, տերմինաբանական վերլուծությամբ ուսումնասիրել են անտիկ դարաշրջանի հասարակական երևույթները:

Պատմական հետազոտություններում առանձնակի նշանակություն ունի աշխարհագրական անվանումները ճշգրտելը, դրանց դերն ու նշանակությունը պարզաբանելը: Այն ընդունված է անվանել տեղագրական (տոպոնիմիկ) վերլուծություն: Այդպիսի ուսումնասիրություններն օգնում են կազմելու աշխարհագրական քարտեզներ:

---

[8] Տե՛ս **Степин В. С.** Философия науки. М., 2007, էջ 197-204:

Անցյալի ճանաչողության համար որոշակի աղբյուր է նաև մարդկանց անուն-ազգանունների վերլուծությունը, որն անվանում են հատկանվանագիտական (անտրոպոնիմիկ) վերլուծություն: Նկատենք, որ երբեմն տերմինաբանական վերլուծության ճշգրտությունից է կախված պատմական ուսումնասիրության արդյունքը:

Մաթեմատիկական մեթոդները պատմական գիտելիքում

Դիտարկված մեթոդները որակական բնույթի են: Դրանց միջոցով իրականացված վերլուծությունները հիմնականում նկարագրական են: Սակայն այդ մեթոդներով չի սպառվում պատմաբանի ճանաչողական միջոցների ողջ համախումբը: Պատմական գիտություններում ավելի ու ավելի լայն կիրառություն են ստանում մաթեմատիկական մեթոդներն ու ծրագրավորման միջոցները:

Քանակական վերլուծության իմաստը ոչ միայն հետազոտության մեջ այս կամ այն քանակական տվյալներն օգտագործելն է, ինչպես երբեմն ենթադրում են, այլև հետազոտվող օբյեկտների, երևույթների, գործընթացների քանակական, կառուցվածքային բնութագրերի համակարգը բացահայտելն ու ձևավորելը: Այդպիսի վերլուծությունը նոր տեղեկություն է տալիս, որը հնարավոր չէ ստանալ նկարագրական մեթոդներով: Սակայն մաթեմատիկացումն արդյունավետ է այն դեպքում, երբ մաթեմատիկացվող գիտությունը բավականին «հասուն է» և ունի ձևավորված, հայեցակարգված ապարատ:

Պատմական հետազոտություններում վիճակագրական մեթոդները մաթեմատիկական վերլուծության նախնական ձևն են:

Վիճակագրությունն առաջացել է XVII դ. երկրորդ կեսին: Դրա հայրենիքն Անգլիան է:

Վիճակագրական մեթոդը պատմական գիտության մեջ լայն կիրառություն է գտել XIX դարի երկրորդ կեսին: Այդ մեթոդի վրա է հիմնվել Գ. Բոկլը՝ հիմնավորելով պատմության օրենքների իր ըմբռնումը: Իսկ անտիկ պատմության մասնագետ, գերմանացի Կ. Յու. Բելոխն (1854-1929) այն կարծիքն է արտահայտել, որ պատմությունը, այդ թվում նաև գաղափարական կյանքը, պետք է ուսումնասիրվի վիճակագրական նյութի միջոցով:

Ճիշտ է՝ մաթեմատիկական մեթոդները, ավելի ստույգ՝ վիճակագրական մեթոդները, կարևոր դեր ունեն գիտական գիտելիքի, այդ թվում նաև պատմական գիտելիքի կառուցվածքային առանձնահատկությունները բացահայտելիս, սակայն անհրաժեշտորեն պետք է նկատի ունենալ գիտելիքի յուրահատկությունները: Հայտնի է, որ վիճակագրական մեթոդները կիրառելի են այնտեղ, որտեղ գոյություն ունեն զանգվածային, համասեռ, միատիպ երևույթներ, դեպքեր, իրավիճակներ, միտումներ, մինչդեռ պատմության օբյեկտները հիմնականում անհատական ու առանձնահատուկ են: Իսկ այդպիսի օբյեկտները կա-

րող են ներկայացվել նկարագրական եղանակով: Այդուամենայնիվ, պատմաբաններն ավելի ու ավելի մեծ չափով մոդելավորման, բազմաչափ տիպաբանության, համակարգչային ծրագրավորման միջոցներ են օգտագործում իրենց հետազոտություններում[9]:

Հարց է առաջանում՝ այս մեթոդները բավարա՞ր են պատմական հավաստի, ճշմարտացի գիտելիք ձեռք բերելու համար: Մենք պաշտպանում ենք այն մտածողների տեսակետը, որ պատմական գիտելիքներ կառուցելիս ոչ պակաս կարևոր են նաև մարդուն և հասարակությանը ներսից դիտարկելու, զգալու, գնահատելու պատմաբանի կարողությունը, նրա անձնական փորձը, գիտելիքները, սուբյեկտիվ որակները, մարդու, հասարակության մեջ ներթափանցելու ինտուիտիվ հնարավորությունը, երևակայությունը, դրանց միջոցով պատմական դեպքերի, երևույթների, գործընթացների մասին ամբողջական կոնստրուկտներ, մոդելներ ստեղծելու կարողությունը, դրանք այլ մեթոդներով ձեռք բերված գիտելիքների հետ համադրելու ունակությունը: Պատահական չէ, որ գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ մասնագիտորեն պատմությամբ կարելի է զբաղվել միայն հասուն տարիքում: Մարդուն և հասարակությունը ներսից դիտելու, ներթափանցելու, զգալու, գնահատելու պատմաբանի ունակության թերությունն այն է, որ նա կարող է ժամանակակից, սուբյեկտիվ դարձնել ուսումնասիրվող ժամանակաշրջանը: Ուստի շատ քննադատներ գտնում են, որ պատմական հետազոտությունները չեն կարող օբյեկտիվ լինել, որ ամեն մի պատմաբան, ամեն մի նոր ժամանակաշրջանում գրում է իր պատմությունը: Իհարկե, այդ տեսակետն ունի ճշմարտության տարր: Պատմաբանը չի կարող վերանալ ոչ իրենից, ոչ էլ իր ժամանակաշրջանից: Սակայն չպետք է մոռանալ, որ ամեն մի նոր ժամանակաշրջանում մարդը, հատկապես պատմաբանը, գիտության զարգացման շնորհիվ ունենում է նոր գիտելիքներ, մտածողություն մարդու և հասարակության մասին, որը թույլ է տալիս «նոր աչքերով» դիտել անցյալը: Լավ մասնագետը կարողանում է նոր գիտելիքներով ոչ թե ժամանակակից դարձնել ուսումնասիրվող թեման, այլ ավելի խորը թափանցել հետազոտվող նյութի մեջ՝ ուսումնասիրվող թեման դիտարկելով համապատասխան ժամանակաշրջանի հասկացություններով, կատեգորիաներով, մտածողությամբ, բայց ավելի խորն ու ամբողջական:

Այսպիսով, պատմական գիտության վերոշարադրյալ մեթոդներից կարելի է եզրակացնել, որ պատմությունը անհատականի, ունիկալի, եզակիի ու ընդհանուրի, օբյեկտիվի ու սուբյեկտիվի բարդ համակցություն է: Ուստի գիտական ճշմարտությունը կարելի է սահմանել որպես հավաստիություն, որն ունի բավարար հիմքեր, հիմնավորվածություն և համոզչականություն տվյալ սոցիալ-մշակութային համակարգում: Այս սահմանման հիմքերը ձգվում են դեպի հումանիստներ, Լայբնից, Կանտ:

---

[9] Տե՛ս **Ковальченко И. Д.**, նշվ. աշխ.:

Բանալի բառեր – *պատմություն, պատմության առարկա, գործառույթ, հասարակական պատմություն, ֆորմացիա, գիտահանաչողություն, կանխատեսում, հիշողություն, դաստիարակչություն*

АЛЬБЕРТ КАЗАРЯН – *Предмет, функции и основные методы истории.* – Один из важных вопросов, интересующих методологию истории, – какова предметная сфера общественной истории, каковы её функции и основные методы изучения? Под общественной историей в статье понимается минувшее общества и человеческой личности, выявление, характеристика и разъяснение их закономерных изменений в социальной, политической, экономической, психологической и культурной плоскостях, в пространстве и времени. В статье раскрыты также научно-познавательная и воспитательная функции истории, которая выступает общественной памятью и способствует предвидению.

Ключевые слова: *предмет истории, функция, общественная история, формация, научное познание, предвидение, память, воспитание*

ALBERT GHAZARYAN – ***The Subject, Functions and Basic Methods of History.*** – One of the most important issues concerning the methodology of history is what the subject of Social History is and which the functions of it are. Under Social History the article refers to the society of the past, the human, his individuality in social, political, economic, psychological, cultural planes, their change in space and time. Here the disclosure, description, and explanation of the peculiarities of natural changes can be stated. The article presents the scientific-cognitive and educational functions of History. In addition, History serves as public memory and contributes to foresight.

Key words: *History, the subject of History, function, Social History, formation, scientific cognition, foresight, memory, education*